ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԿԳԿ-ԲՄԱՊՁԲ-25/54

ք.Երևան «24» 02 2026թ.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ՝ Կ. Ղարիբյանի, ով գործում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 551,820,000.00 (հինգ հարյուր հիսունմեկ միլիոն ութ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև 165,546,000.00 (մեկ հարյուր վաթսունհինգ միլիոն հինգ հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում: Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ապրանքի դիմաց վճարումները կատարվելու են ըստ փուլերի, հետևյալ կարգով. Առաջին փուլի վճարում՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված վեց ամիս ժամկետի ավարտին՝ տեղադրման վայր ապրանքի մատակարարման, մոնտաժման և հաշիվ-ապրանքագրի ներկայացման դեպքում վճարվում է պայմանագրով սահմանված գումարի 48.5% -ը՝ ներայալ կանխավճարը: Երկրորդ փուլի վճարում՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված ութ ամիս ժամկետի ավարտին՝ տեղադրման վայր ապրանքի մատակարարման, մոնտաժման և հաշիվ-ապրանքագրի ներկայացման դեպքում վճարվում է պայմանագրով սահմանված գումարի ևս 40.5% -ը: Երրորդ փուլի վճարում՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված տաս ամիս ժամկետի ավարտին՝ տեղադրման վայր ապրանքի մատակարարման, մոնտաժման և հաշիվ-ապրանքագրի ներկայացման դեպքում վճարվում է պայմանագրով սահմանված գումարի վերջին 11% -ը:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան հանձման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի

միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից

ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արծանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011045565
ՀՎՀՀ 02704199

Գլխավոր քարտուղարի պ/կ՝
---------- Կ. Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն -Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան , Ազատության 26/8
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 1570011489540100
ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝
---------- Ռ. Թումանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«24» 02 2026թ. կնքված
ԲԿԳԿ-ԲՄԱՊՁԲ-25/54 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի									Մատակարարման		
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը*	Տեխնիկական բնութագիրը**	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը***
1	45211244/501	Մաքուր սենյակների մոդուլային հավաքածու՝ օժանդակ սարքերով համալրված հատուկ կահավորանքով և անխափան էլեկտրասնուցման համակարգով	1.Decoration Wall panel 2.GrunWelt air handlling unit GrunWelt CAV, VAV GrunWelt HEPA-filters YORK outdoor unit 3. Automatic control system components 4. Էլեկտրական սարքավորումներ: Հողանցում: Լուսավորություն 5.Приборы приемно-контрольные и охранно-пожарные 6.1 AC-PMF Series dual stage changeover regulator system 6.2 Nitrogen generator I-flow mini 7023 6.3 Dry Scroll pump 6.4 Turbopumping system mobile 6.5 Plasma cleaner 6.6 Hot Plate HP8	Ներկայացվում է կից՝ Հավելված 1.1-ով	լրակազմ	551,820,000.00	551,820,000.00	1	ք. Երևան 0014, Պ. Սևակի փ. 5/2	1	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, սահմանելով, որ Մաքուր սենյակների մոդուլային հավաքածուի (ներառյալ օժանդակ սարքերով համալրված հատուկ կահավորանք և անխափան էլեկտրասնուցման համակարգը) մատակարարման, մոնտաժման, փորձարկման, ուսուցման և սերտիֆիկացման ժամկետը **տաս ամիս է**՝ հաշված պայմանագրի կնքման օրվանից:

			6.7 IONEX KB water treatment system 6.8 Ultra Pure Water Filter System 7.0 Դիզելային էլեկտրակայան Hyundai Doosan DP180LB 8.0 Fume hoods with baths 9.0 Spin Processor WS-650Mz-23NPPB 9.1 HP 16 Semi-automatic wedge &ball Bonder 9.2 Four Point Probe Electrical Resistivity Tester 10.0 IQ, OQ, PQ of Cleanroom system 1.Flooring; Partitions& celiling Doors and Windows; Clean room equipment; Air Shower 2. AHU-1; AHU-2; AHU-3; EF-1 3. LP-A99S000-C; A99LY-200C; P233A-4-PKC; HT-9009-UD2; A25CN-9001; DPT-2500 M9220-BDC-1; M9220-GGA-1 A99RY-1C; MS-FEC2611-0 MS-IOM4711-0; MS-IOM2721-0 MS-IOM3721-0; NCE 4. էլեկտրասարքավորումներ՝ տիպիկ գործող միավորի տարածքները պատի պարիսպներով լուսավորելու համար (անջատիչներ, միացման տուփեր, սկուտեղներ, կախիչներ, վահաններ, մալուխներ և լարեր,							Այն իրականացվում է երեք փուլով՝ ***Առաջին փուլում***՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված վեց ամիս ժամկետում, իրականացվում է 1-ից 7 կետերով նախատեսված ապրանքի մատակարարումը և մոնտաժումը: ***Երկրորդ փուլում***՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված ութ ամիս ժամկետում, իրականացվում է 8-րդ կետերով նախատեսված ապրանքի մատակարարումը և մոնտաժումը: ***Երրորդ փուլում***՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված տաս ամիս ժամկետում, իրականացվում է 9-րդ կետերով նախատեսված ապրանքի մատակարարումը և մոնտաժումը, ինչպես նաև ամբողջական համակարգի փորձարկումը, ուսուցումը և սերտիֆիկացումը:

			տերմինալային բլոկներ և այլն) IP55, լուսատու LED 600x600-ից, 40 Վտ հզորությամբ, IP67, էլերկտրական շիթեր և այլ ընդհանուր սարքավորումներ: Առանձին հողանցում հատուկ լիտոգրաֆիայի համար՝ առավելագույնը 0.5 Օհմ դիմադրությամբ: 5. Rbz-319538; Rbz-319531; Rbz-337454; Rbz-337936; Rbz-510750; Rbz-317532; Rbz-337637; Rbz-338683; Rbz-052540; Rbz-045579; Rbz-337646; Rbz-377218; Rbz-337647; Rbz-338162; Rbz-338117 6. 1 AC-PMF; PRM-S; NV-LE04; NV-LE06; NV-LGM04; NV-GSK04; NV-LT06; BG-SS-06-MM-BA; HPH-F4S1W 6.2 I-flow mini 7023 3305258 6.3 IDP-3 6.4 9698404M044 6.5 10LCY-P10L 1000W 6.6 100018731P 6.7 91012 6.8 PRO-E-UP-V-100 7.0 АД-500С-Т400-2РКМ17 8.0 FH 5b PVC FMET 4910 9.0 WS-650Mz-23NPPB 9.1 101045 240001 251025 251040 251035								

			311005 310012 9.2 ST2258C 10.0 2512631-01 1.Flooring; Partitions& celiling; Doors and Windows; Clean room equipment; Air Shower 2. GW.AHU.RA 093-093 GW.AHU.RA 124-093 GW.AHU.RA 077-062 GW.AHU.RA 093-062 3. LP-A99S000-C; A99LY-200C; P233A-4-PKC; HT-9009-UD2; A25CN-9001; DPT-2500; M9220-BDC-1; M9220-GGA-1; A99RY-1C; MS-FEC2611-0; MS-IOM4711-0 MS-IOM2721-0; MS-IOM3721-0; NCE 4. էլեկտրասարքավորումներ՝ տիպիկ գործող միավորի տարածքները պատի պարիսպներով լուսավորելու համար (անջատիչներ, միացման տուփեր, սկուտեղներ, կախիչներ, վահաններ, մալուխներ և լարեր, տերմինալային բլոկներ և այլն) IP55, լուսատու LED 600x600-ից, 40 Վտ հզորությամբ, IP67, էլերկտրական շիթեր և այլ ընդհանուր սարքավորումներ: Առանձին հողանցում հատուկ լիտոգրաֆիայի համար՝ առավելագույնը 0.5 Օհմ դիմադրությամբ:								

			5. Rbz-319538; Rbz-319531; Rbz-337454; Rbz-337936; Rbz-510750; Rbz-317532; Rbz-337637; Rbz-338683; Rbz-052540; Rbz-045579; Rbz-337646; Rbz-377218; Rbz-337647; Rbz-338162; Rbz-338117 6. 1 AC-PMF; PRM-S; NV-LE04; NV-LE06; NV-LGM04; NV-GSK04; NV-LT06; BG-SS-06-MM-BA; HPH-F4S1W 6.2 I-flow mini 7023 3305258 6.3 IDP-3 6.4 9698404M044 6.5 10LCY-P10L-1000W 6.6 100018731P 6.7 91012 6.8 PRO-E-UP-V-100 7.0 АД-500С-Т400-2РКМ17 8.0 FH 5b PVC FMET 4910 9.0 WS-650Mz-23NPPB 9.1 101045 240001 251025 251040 251035 311005 310012 9.2 ST2258C 10.0 2512631-01 1.Shanghai MARYA Pharmaceutical Engineering& Project Co. Ltd, 2. GrunWelt, 3. Johnson Controls 4. տեղական շուկա								

			5. ООО "РУБЕЖ" 6.1 NAI -LOK Industrial Co. Ltd, 6.2 PEAK Scientific 6.3 Agilent 6.4 Agilent 6.5 ZHENGZHOU CY SCIENTIFIC INSTRUMENT CO.,LTD, 6.6 SUSS MicroTec Solutions GmbH 6.7 Bungard Electronik GmbH &Co KG 6.8 Zhengzhou Laboao Equipment Co. Ltd. 7.0 Группа компаний ТСС 8.0 STROZA s.r.o. 9.0 Laurell Technologies Corporation, USA 9.1 TPT Wire Bonder 9.2 Suzhou Jingge Electronic Co., LTD 10.0 CQV Systems d.o.o.								
Ընդամենը՝											

*Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մոդել ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում:

**«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջների համաձայն ցանկացած հղման դեպքում կիրառելի են «կամ համարժեք» բառերը:

*** Ապրանքի դիմաց վճարումները կատարվելու են ըստ փուլերի, հետևյալ կարգով. Առաջին փուլի վճարում՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված վեց ամիս ժամկետի ավարտին՝ տեղադրման վայր ապրանքի մատակարարման, մոնտաժման և հաշիվ-ապրանքագրի ներկայացման դեպքում վճարվում է պայմանագրով սահմանված գումարի 48.5% -ը՝ ներայալ կանխավճարը: Երկրորդ փուլի վճարում՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված ութ ամիս ժամկետի ավարտին՝ տեղադրման վայր ապրանքի մատակարարման, մոնտաժման և հաշիվ-ապրանքագրի ներկայացման դեպքում վճարվում է պայմանագրով սահմանված գումարի ևս 40.5% -ը: Երրորդ փուլի վճարում՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված տաս ամիս ժամկետի ավարտին՝ տեղադրման վայր ապրանքի մատակարարման, մոնտաժման և հաշիվ-ապրանքագրի ներկայացման դեպքում վճարվում է պայմանագրով սահմանված գումարի վերջին 11% -ը:

ԳՆՈՐԴ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011045565
ՀՎՀՀ 02704199

Գլխավոր քարտուղարի պ/կ՝
---------- Կ. Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.S.

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն -Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան , Ազատության 26/8
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 1570011489540100
ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝
---------- Բ.Թադևոսյան
(ստորագրություն)
Կ.S.

Concern-Energomash Joint-Stock Company Closed Type • Armenia Yerevan Mashtots D-t 3 Концерн-Энергомаш Акционеров Общ-во Закрыт. Тип • Армения г. Ереван 01210095

Հավելված N 1.1
«____» _____ 2026թ. կնքված
ԲԿԳԿ-ԲՄԱՊՁԲ-25/54 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մաքուր սենյակների մոդուլային հավաքածուի մատակարարում, մոնտաժում, փորձարկում, ուսուցում և լիցենզավորում ըստ ISO ստանդարտի:

Միկրո-նանոէլեկտրոնիկայի, դրա առանձին տարրերի և բաղադրիչների պատրաստման և բնութագրման համար անհրաժեշտ ISO ստանդարտով սահմանված ISO8-ից մինչև ISO5 դասի մաքրության լաբորատոր պայմանների ապահովման նպատակով նախատեսված «Մաքուր սենյակների մոդուլային հավաքածուն» բաղկացած է.

1. համալիրի հատուկ մոդուլների կառուցվածքային տարրերից և բաղադրիչներից,
2. ջեռուցման և ներքին օդի մաքրման և ախտահանման ինքնավար համակարգից,
3. դիսպետչերական և կլիմայի կառավարման համակարգից,
4. էլեկտրական սարքավորումներից: Հողանցումից: Լուսավորությունից,
5. մաքուր սենյակի միջավայրի մոնիտորինգի համակարգից,
6. հատուկ մաքրության գազերի և իոնազերծված ջրի մատակարարման համակարգից,
7. անխափան սնուցման կայանից,
8. մաքուր սենյակներին ներկառուցվող քիմիական հատուկ քարշիչ պահարանների հավաքածույից,
9. քիմիական քարշիչ պահարաններին ներկառուցվող սարքերից :

Սույն մրցույթային հայտով նախատեսվում է 1-ից 9 կետերում բերված բաղադրիչների մատակարարում, մոնտաժում, փորձարկում և լիցենզավորում (սերտիֆիկացում)՝ համապատասխան ակտերի տրամադրմամբ:

1. Համալիրի մոդուլների հավաքման կառուցվածքային տարրեր (կառուցողական համալիր) (ԿՄ)

Բարձր ճնշման պլաստիկից (HPL) պատրաստված՝ մաքուր սենյակների համար նախատեսված, առաստաղի վահանակներ:

Պատի սենդվիչ պանելներ՝ պատրաստված բարձր ճնշման պլաստիկից (HPL) մաքուր սենյակների համար, չափսերը 1000x2500(h) մմ:

1	Պատերի իրականացում HPL վահանակներով 5-ից 8մմ հաստությամբ մետաղական պրոֆիլների վրա	մ2 / м2	285.7

Մաքուր սենյակների հատուկ կոնստրոկցիոն ալյումինե պրոֆիլներ: Արտաքին անկյունային բաժակներ: Ներքին անկյունային բաժակներ:

2	Համալիրի մոդուլների հավաքման տարրերի կոմպլեկտ՝ ալյումինե պրոֆիլների, անկյունակներ և այլն	մ2 / м2	402.0
2.1	Կախովի հեծան ալյումինե պրոֆիլից	մ / м	42.0
2.2	Կարգավորվող հատակային ռելս /Հաստություն՝ 1.2 մմ Բարձրություն՝ 100 մմ/	մ / м	102.0
2.3	Միացման ալյումինե ալիքաձև պրոֆիլ(U-պրոֆիլ) Հաստ.ն՝ 1.2 մմ Բարձր.՝ 25 մմ	մ / м	204.0

2.4	Միացման ալյումինե ալիքաձև պրոֆիլ(U-պրոֆիլ) Հաստ.՝ 0.8մմ Բարձր.՝ 15 մմ	մ / м	180
2.5	35×35 ալյումինե անկյուն Հաստ. 1.2 մմ	մ / м	120
2.6	Մաքուրսենյակի ալյումինե ներքին կլորացված անկյունային պրոֆիլ Հաստ.՝ 0.75 մմ	մ / м	600
2.7	Մաքրասենյակի ալյումինե արտաքին կլորացված անկյունային պրոֆիլ Հաստ.՝ 1.2 մմ	մ / м	72
2.8	Վահանակների միացման ալյումինե պրոֆիլ (կենտրոնական միացուցիչ) Հաստություն 0.8 mm	մ / м	486
2.9	Ալյումինե պրոֆիլ — Ներքին անկյուն	հատ/шт	100
2.10	Ալյումինե պրոֆիլ — Արտաքին անկյուն	հատ/шт	50

2.11	Ալյումինե պրոֆիլ — Դռան փական/վերջնական կափարիչ	հատ/шт	24
2.12	Ալյումինե պրոֆիլ — «I»-ձև/«H»-ձև (I/ H)	մ / м	60
2.13	Միացման հանգույցների հավաքածու / հեղյուսներ, պարուրակ, և այլն/	հավաք./комп	1.0

Օդային ցնցուղ ISO7-ISO6 աստիճան:

3	Օդային ցնցուղ (մաքրասենյակի մուտքային խուց) Մեկ անձի համար, երկկողմ փչում Արտաքին չափը՝ 1000×1000×2130 մմ, ներքին չափը՝ 790×880×1925 մմ LCD կառավարման վահանակ, լուսա-էլեկտրական սենսոր, ավտոմատ կառավարում, երկդռնյա էլեկտրոնային փոխափակիչ (interlock) դռան փականի հետ, արտաքին մաս՝ չժանգոտվող պողպատ 304, ներսը՝ չժանգոտվող պողպատ 304	հատ /шт.	1

Սպառվող նյութեր, ամրացումներ և այլն ցանկապատով սենյակների համար (ներառյալ պատուհանների և դռների շրջանակները, միակցիչները, հողակցիչները, մուտքի լյուկերը): Ոչ ստանդարտ միաթև դուռ, կախովի, ալյումինե շրջանակ՝ լցված HPL պլաստիկով:

4	Մեկթև դուռ Արտաքին շրջանակի չափը 800×2100 մմ 50 մմ հաստությամբ սենդվիչ-վահանակ թղթյա փեթակային միջուկով Տեսադիտման պատուհան կոփված երկշերտ (միջբարակ շերտով) թափանցիկ ապակի Դռան շրջանակի հաստությունը 50 մմ HPL (բարձր ճնշման լամինատ), 4 մմ	հատ/шт	1.0
5	Մեկթև դուռ Արտաքին շրջանակի չափը 900×2100 մմ 50 մմ հաստությամբ սենդվիչ-վահանակ թղթյա փեթակային միջուկով Տեսադիտման պատուհան կոփված երկշերտ (միջբարակ շերտով) թափանցիկ ապակի Դռան շրջանակի հաստությունը 50 մմ HPL, 4 մմ/	հատ/шт	3.0
6	Կրկնաթև դուռ Արտաքին շրջանակի չափը 2000×2100 մմ 50 մմ հաստությամբ սենդվիչ-վահանակ թղթյա փեթակային միջուկով Տեսադիտման պատուհան կոփված երկշերտ (միջնշերտով) թափանցիկ ապակի Դռան շրջանակի հաստությունը 50 մմ HPL, 4 մմ	հատ /шт.	3
7	Կրկնաշերտ միջբացված (ինսուլացված) մաքրասենյակային պատուհան Չափը 500×1200մմ Նյութը երկշերտ կոփված ապակի, յուր. շերտ 5 մմ, ընդհ. հաստ՝ 50 մմ	հատ /шт.	1
8	Դռան փական	հատ /шт.	10

Հատուկ աթոռ 10 հատ ISO8-ISO5 դասի սենյակներում տեղադրելու համր: Հատուկ հանդերձանք ներառյալ՝ զգեստը, գլխարկներ, ակնոցներ, ոտնամաններ ISO8-ISO5 դասի սենյակներում աշխատելու համար, 15 միավոր՝ որից 2-ը XL -2 հատ, L-5հատ, M-5հատ, S-3հատ:

9	Չժանգոտվող պողպատից պահարան / հագուստապահարան Նյութը՝ չժանգոտվող պողպատ 304 Չափը՝ 400×350×1850 մմ	հատ /шт.	16
10	Անցումային նստարան (կոշիկների փոխման) / Cross over bench Նյութը՝ չժանգոտվող պողպատ 304 Չափը՝ 600×420×450 մմ (Ե×L×Բ / L×W×H)	հատ /шт.	2
11	Հակաստատիկ հաղորդիչ պղնձե փայլաթիթեղ	մ2 / м2	112.0
12	PVC սոսինձ	մ2 / м2	120.0

Անտիստատիկ լինոլեում մաքուր սենյակների հատակի համար:

13	Համասեռ հակաստատիկ լինոլեում	մ2 / м2	104.4
14	Կախովի առաստաղ 600x600 ցինկապատ պողպատից կամ HPL -ից	մ2 / м2	112.0

«Մաքուր սենյակների մոդուլային հավաքածուի» մոնտաժման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների իրականացումը, այդ թվում ամբողջ տարածքի հատակի պատում՝ վինիլային ծածկույթով: Մաքուր սենյակների համալիրի հատուկ մոդուլների կառուցվածքը կատարվում է ըստ մրցույթում ներկայացված հավելված 1-ի գծագրերի:

2. Ջեռուցման և ներքին օդի մաքրման ինքնավար համակարգ

Օդափոխման հիգիենիկ համակարգը ներառում է՝ տաք պահուստ, EU3, F7, F9 մոդելի ֆիլտրեր, ուղիղ գոլորշիացուցիչ, օդափոխիչ, ճկուն միակցիչներ, խլացուցիչ, կառավարման վահանակ և մոնտաժման համար նախատեսված գործիքների հավաքածու: Նշված համակարգը ունի հետևյալ տեխնիկական պարամետրերը: Օդի հոսքը 8000 մ^3/ժ, Օդի ճնշումը 600Պա, Օդի դուրս մղման հոսքը 5500մ^3/ : Գոլորշու խոնավացուցիչ 60լ/ժ ՝ հագեցած գոլորշու բաշխիչ համակարգով, ջրամատակարարման խողովակով, խոնավության տվիչներով: Կոմպրեսորային-խտացնող ագրեգատ՝ միացման լրակազմով Qսառ=115կՎտ: H14 HEPA ֆիլտրով զտիչ տուփ՝ մաքուր օդ մատակարարելու համար 350x350մմ- չափերով:
H14 HEPA ֆիլտրով զտիչ տուփ՝ մաքուր օդ մատակարարելու համար 610x610մմ- չափերով:
U15 ULPA ֆիլտրով զտիչ տուփ՝ մաքուր օդ մատակարարելու համար 610x610մմ- չափերով:

1	/Ներածման և արտածման համակարգ ՊՎ-01 5500 մ3/ժամ լրակ-ում; օդի խոնավացուցիչ-գեներատոր	հատ /шт.	1
2	ներածման և արտածման համակարգ ՊՎ-02 8.000/ մ3ժամ լրակ-ում: c օդի խոնավացուցիչ-գեներատոր	հատ /шт.	1
3	ներածման և արտածման համակարգ ՊՎ-03 2500 մ3ժամ լրակ-ում:	հատ /шт.	1

4	ККБ для ПВ1, միացման հավաքածուով, 380В/6,24кВт	հատ /шт.	1
5	ККБ для ПВ2, միացման հավաքածուով, 380В/10,15кВт	հատ /шт.	1
6	ККБ для ПВ3, միացման հավաքածուով, 220В/3,7кВт	հատ /шт.	1
7	/Արտամղող օդափոխիչ, բարձր ճնշման, 3500մ3/ժամ, 1000Պա	հատ /шт.	1
8	HEPA արկղ №1-13, կախիչների լրակազմով, դիֆուզորով / կափույրով HEPA 14 ֆիլտրով, դիֆուզորի ամրացում;	լրակ /наб.	13
9	HEPA արկղ №14-25 կախիչների լրակազմով, դիֆուզորով / կափույրով ULPA 15 ֆիլտրով, դիֆուզորի ամրացում;	լրակ /наб.	12
10	ПВУ-1 /Օդային փական, ձեռքով կառավարվող КВК 400*400 CAV-կառավարվող օդային փական	հատ /шт.	1
11	ПВУ-1 Օդային փական, ձեռքով կառավարվող КВК 650*400 CAV-T կառավարվող օդային փական	հատ /шт.	2
12	ПВУ-1 Օդային փական, ձեռքով կառավարվող КВК 700*600 CAV-կառավարվող օդային փական	հատ /шт.	1
13	ПВУ-1 Օդային փական, ավտոմատ կառավարմամբ և կարգավորմամբ КВК-250*200 GWCA.A.E. 73.00.250.200	հատ /шт.	6
14	ПВУ-1Օդային փական, ավտոմատ կառավարմամբ և կարգավորմամբ КВК-400*250	հատ /шт.	3
15	ПВУ-1 Օդային փական, ձեռքով կառավարվող КВК Ø150мм		1
16	ПВУ-2Օդային փական, ձեռքով կառավարվող КВК 400*400 AC V-400*400	հատ /шт.	2

17	ՊՎՄ-2 Օդային փական, ձեռքով կառավարվող ԿՎԿ 600*500	հատ /шт.	1
18	ՊՎՄ-2 Օդային փական, ավտոմատ կառավարմամբ և կարգավորմամբ ԿՎԿ-500*250	հատ /шт.	4
19	ՊՎՄ-2 Օդային փական, ձեռքով կառավարվող	հատ /шт.	1
20	ՊՎՄ-3 Օդային փական, ձեռքով կառավարվող ԿՎԿ 250*150 мм АС V-250*150	հատ /шт.	2
21	ՊՎՄ-3 Օդային փական, ձեռքով կառավարվող ԿՎԿ 200*200 мм АС V-200*200	հատ /шт.	2
22	ՊՎՄ-3 Օդային փական, ձեռքով կառավարվող ԿՎԿ 300*200 мм АС V-300*200	հատ /шт.	2
23	B-1 ԿՎԿ100мм /Օդային փական, ձեռքով կառավարվող GWCD.GAL.KG.00.0100	հատ /шт.	4
24	B-1 Օդային փական, ձեռքով կառավարվող ԿՎԿ-600*500		1
25	Դիֆուզոր, արտանմղման օդափոխիչի դեկորատիվ վահանակ, ուղղանկյուն 200*300мм / мм	հատ /шт.	5
26	Դիֆուզոր, արտանմղման օդափոխիչի դեկորատիվ վահանակ, ուղղանկյուն 400*300мм / мм	հատ /шт.	3
27	Դիֆուզոր, արտանմղման օդափոխիչի դեկորատիվ վահանակ, ուղղանկյուն 400*400мм / мм	հատ /шт.	4

Օդի ծախսի կարգավորիչ: 0,8 մմ հաստությամբ ցինկապատ պողպատից պատրաստված օդափոխման խողովակների հավաքածու: Փականների, խլացուցիչների, կափույրների հավաքածու: Խողովակների մեկուսացման հավաքածու: Սառեցման միավորի խողովակաշար: Տաք ջրի խողովակաշար: Սառը ջրի խողովակաշար: Կոյուղու խողովակաշար:

1	ПВ-2 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 250x200-3.4 մ	մ2 / м2	3.4
2	ПВ-2 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 400x250-2.8 մ	մ2 / м2	2.8
3	ПВ-2 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 400x400-1.95մ	մ2 / м2	2.0
4	ПВ-2 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 500x400-1.4մ	մ2 / м2	1.4
5	ПВ-2 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 600x500-0.6մ	մ2 / м2	0.8
6	ПВ-2 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 700x600-1.1մ	մ2 / м2	2.9
7	ПВ-2 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 1000x600-27.1մ	մ2 / м2	
8	ПВ-2 отвод/ծունկ 250x200	հատ /шт.	2
9	ПВ-2 отвод/ծունկ 1000x600	հատ /шт.	9
10	ПВ-2 отвод/ծունկ (переход/անցում) 400x400/250x200	հատ /шт.	1
11	ПВ-2 переход/անցում 250x200/400x250	հատ /шт.	1
12	ПВ-2 переход/անցում 400x250/400x400	հատ /шт.	1
13	ПВ-2 переход/անցում 400x250/500x400	հատ /шт.	1
14	ПВ-2 переход/անցում 500x400/700x400	հատ /шт.	1
15	ПВ-2 переход/անցում 700x600/1000x600	հատ /шт.	1
16	ПВ-2 переход/անցում 1000x600/900x900	հատ /шт.	1
17	ПВ-2 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 500x250-14.6մ	մ2 / м2	21.9
18	ПВ-2 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 600x400-3.8մ	մ2 / м2	7.6

19	ПВ-2 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 1000x500-32.15մ	մ2 / м2	90.0
20	ПВ-2 переход/անցում 500x250/600x400	հատ /шт.	2
21	ПВ-2 переход/անցում 600x400/500x1000	հատ /шт.	1
22	ПВ-2 переход/անցում 500x250/500x1000	հատ /шт.	1
23	ПВ-2 переход/անցում 1000x500/900x580	հատ /шт.	1
24	ПВ-2 тройник 1000x500	հատ /шт.	1
25	ПВ-2 отвод/ծունկ 250x500	հատ /шт.	3
26	В-1 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 150x150-5.5մ	մ2 / м2	
27	В-1 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 400x300-17.95մ	մ2 / м2	
28	В-1 Воздуховод прямоугольный / Ուղղանկյուն օդատար խողովակ 600x500-33.9մ	մ2 / м2	
29	В-1 переход/անցում 150x150/400x300	հատ /шт.	1
30	В-1 переход/անցում 600x500/580x460	հատ /шт.	1
31	ПВ-2 отвод/ծունկ 150x150	հատ /шт.	2
32	ПВ-2 отвод/ծունկ 400x300	հատ /шт.	7
33	ПВ-2 отвод/ծունկ 600x500	հատ /шт.	8
